է Իրանայ ճանապարհն, որ Տրապիզոնից Կարին, Կարնից Բասենի միջով կանցնի Տէլի—Բաբա գիւղի ½ ժամ հարաւից, կը մտնէ Գարա—Տերպէնտ (Սև—կիրճ) կոչուած նեղ երկու կողմից ժայռերով ուղահայեաց չափազանց բարձրացած սարսափ ազդող կիրճն[1], 3½ ժամու չափ խոր կրճի մէջ Իշեկից իջնող ձորակի հետ բարձրանալով Խալեազի լեռնադաշտն, որ ընդարձակ տարածութիւն մի բռնած է Բաղրեւանդայ դաշտի արեւմտեան բարձրավանդակին վերայ. 3 ժամից ետ բարձրացանք Դահար քրդաբնակ գիւղն, որ Խալեազի հիւսիսային կողմն խճուղւոյն վերայ գտնուած առաջին գիւղն, որ Ալաշկերտի վիճակին կը պատկանի և կայ Դռամ լեռներու ստորոտն:

Մեր ճանապարհն Գարատերպէնտից մինչև Դահար արեւելեան հարաւային ուղղութեամբ էր, նոյն ուղղութեամբ Դռամ լեռներու հարաւային կողերն 3 ժամ քերելով անցանք Ջիրուայ կեռուկն, ապա Խաւուրմի ջրի հետ իջանք Քիւրդ-Ալի քրդաբնակ գիւղն. ստի ետ խճուղւոյ հետ մեր ուղին շարունակեցինք ½ ժամ ի հարաւ, ճանապարհից դուրս դէպի աջ թողով Խալեազի վերջին Արուղէթ գիւղն, խոնարհեցանք 2½ ժամու չափ, իջանք Ալաշկերտի դաշտի առաջին գիւղն -Ջեռլկան՝ մեր աջն թողած լինելով Ցանձուծկներու

---

1. Այս կիրճն երեք խոր ձորակներու կը բաժանուի. երկու ձորակներն Գարատերպէնտի մօտ իրար կը միանան, ձախ կողմից իջնող ձորն Դըզլ Տէրպէնտ կասուի որ և Իյտելու, ուր կբարձրանայ ճանապարհ մի, Զաթայ նեղ կրճի միջով կանցնի, կը դառնայ կիջնայ Մօլլա Սիւլէյման։ Մի այլ ճանապարհ ևս աջ կը բաժանուի Եազլի-տաշ, ուստի Խալեազ կը բարձրանայ ապա Խնուս կանցնի։